



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2017թ. թիվ 75-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵՂԱՎՆԵՐԻ ԵՎ
ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Լոռու մարզի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով, ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 06-ի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետին համապատասխան՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Առաջարկել ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2017 թվականի մարտի 01-ը՝ համաձայն սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի, կազմել և հաստատել «Համայնքի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլան» և պլանով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով համայնքի բյուջեից հատկացնել համապատասխան միջոցներ.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 30-ը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ) Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն՝ համայնքի տարածքում իրականացված բնածին և տեխնածին արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանն ու ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչությանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
2017թ. փետրվարի 16
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ